



Funded by
the European Union



MEDIA
INITIATIVES
CENTER



COMMITTEE TO PROTECT
FREEDOM OF EXPRESSION

**«Մեդիայի որակի և դիմակայունության նախաձեռնություն.
մեդիայի հզորացման նոր փուլ» ծրագիր**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌԱՐՁԱԿՎՈՂ ՁԼՄ-ՆԵՐՈՒՄ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2026Թ. ՀՈՒՆԻՍԻ 7-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

Այս հետազոտությունը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ:
Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Երևանի մամուլի ակումբը,
և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:



ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

www.ypc.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄՇԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ	4
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌԱՐՁԱԿՈՂ ՁԼՄ-ՆԵՐՈՒՄ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2026Թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՄՇԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	6
2026Թ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՄՇԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ Ի ՀԱՅՏ ԵԿԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	Error!
Bookmark not defined.7	
ՄՇԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՆՅԿԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ	20
ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ	24

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի հեռարձակվող ՉԼՄ-ներում ՀՀ Ազգային ժողովի 2026թ. ընտրությունների լուսաբանման մշտադիտարկումն իրականացրել է Երեւանի մամուլի ակումբը՝ «Մեդիայի որակի եւ դիմակայունության նախաձեռնություն. մեդիայի հզորացման նոր փուլ» ծրագրի շրջանակում, որը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից: Մշտադիտարկումն ընդգրկել է 2026թ. մայիսի 8-հունիսի 5-ը (նախընտրական քարոզչության ժամանակահատվածը):

Մշտադիտարկման առարկա են դարձել տասնյոթ կուսակցություն եւ երկու դաշինք, որոնք ՀՀ ԿԸՀ-ում գրանցվել են ՀՀ 2026թ. խորհրդարանական ընտրություններին համապետական ընտրական ցուցակներով մասնակցելու համար: «Այլանս» առաջադիմական ցենտրիստական կուսակցության մշտադիտարկումն իրականացվել է մինչեւ 2026 թ. մայիսի 27-ը, քանի որ կուսակցությունը դուրս է եկել ընտրապայքարից եւ չի մասնակցել ընտրություններին:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՑԱՆԿՈՒՄ

ՆԵՐԱՌՎԱԾ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ/ԴԱՇԻՆՔՆԵՐԸ

1.	ՌԵՖՈՐՄԻՍՏՆԵՐԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
2.	«ԲՈԼՈՐԻՆ ԴԵՄ ԵՄ» ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
3.	«ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ» ԴԱՇԻՆՔ
4.	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇՆՈՐՀԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
5.	«ՆՈՐ ՈՒԺ» ՌԵՖՈՐՄԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
6.	«ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԹԵՎԵՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
7.	«ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
8.	«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԲԵՎԵՐ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
9.	«ԶՈՉԱՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱՃՆՈՒՄԵՆ ԵՎ ԱԶԳԻ ՉԱՐԹՈՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
10.	ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
11.	«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
12.	ԶՐԻՍՏՈՆԵԱ-ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
13.	«ԱԼՅԱՆՍ» ԱՌԱՋԱԴԻՄԱԿԱՆ ՑԵՆՏՐԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (մինչեւ մայիսի 27, 2026թ.)
14.	«ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԽՍԲՈՒՄ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
15.	«ԴԵՄՈԿՐԱՏԻԱ ՕՐԵՆՔ ԿԱՐԳԱՊԱՅՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
16.	«ԶԱՐԱԶԱՏԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
17.	ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ
18.	«ՀԱՆՈՒՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
19.	«ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Լռության օրը մշտադիտարկում չի իրականացվել:

Մշտադիտարկման նպատակներն էին քանակական տվյալների վերլուծության միջոցով պարզել եւ սահմանել.

- ՀՀ Ազգային ժողովի 2026թ. ընտրությունների նկատմամբ Հայաստանի հեռարձակվող ՉԼՄ-ների ուշադրության աստիճանը,

- որքանով ազատ եւ հավասարակշռված են Հայաստանի հեռարձակվող ՉԼՄ-ները լուսաբանել խորհրդարանական ընտրություններին մասնակցող քաղաքական կուսակցությունների/դաշինքների քարոզարշավը՝ դրանով իսկ նպաստելով ինքնուրույն եւ գիտակցված ընտրության կատարմանը,

- որքանով են լրատվամիջոցները հետեւել նախընտրական քարոզարշավի լուսաբանումը կարգավորող օրենսդրության դրույթներին,

- որքանով են լրատվամիջոցները 2026թ. ՀՀ խորհրդարանական ընտրությունները լուսաբանելիս հետեւել էթիկայի համընդհանուր նորմերին եւ համապատասխան երաշխավորություններին:

Մշտադիտարկման վերոթվարկյալ խնդիրների իրականացման համար կիրառվել են որակա-քանակական չափումներն ու հաշվարկը:

Մշտադիտարկման տվյալների արձանագրումը կատարվել է երկու մակարդակում՝ հեռուստանյութերում՝ համապետական ընտրական ցուցակներով ՀՀ խորհրդարանական ընտրություններին մասնակցող կուսակցություններին/դաշինքներին անդրադարձների քանակը եւ բնույթը, ինչպես նաեւ հեռուստանյութերում կուսակցությունների/դաշինքների մասին արտահայտությունները եւ տեսադրվագները՝ էթիկայի սկզբունքներին համապատասխանության տեսանկյունից:

Մշտադիտարկման առարկա չի եղել կուսակցություններին/դաշինքներին/նրանց ղեկավարներին/ներկայացուցիչներին ամբողջությամբ կամ մասնակի նվիրված հեռուստանյութերի եթերաժամանակը, քանի որ ընտրական գործընթացներում կուսակցություններին եւ դաշինքներին տրամադրվող եթերաժամանակի մշտադիտարկումն ու վերահսկումն իրականացնում է Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովը (ՀՌՀ):

Առանձին կազմվել եւ վերլուծվել է ուսումնասիրված հաղորդումներում հրավիրված հյուրերի ցանկը:

Մշտադիտարկման մանրամասն մեթոդաբանությունը տե՛ս հաշվետվության վերջում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌԱՐՁԱԿՎՈՂ ՁԼՄ-ՆԵՐՈՒՄ
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2026Թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մշտադիտարկումն ընդգրկել է 10 հեռուստաալիք. հանրային մոլտիպլեքսից՝ Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք, Առաջինի լրատվական ալիք, «Արմենիա», «Կենտրոն», «Շանթ», «5-րդ ալիք» եւ «Ֆրի Նյուզ» (հանրային մոլտիպլեքսում ներառված ալիքները, ըստ [Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի](#), որոշակի պարտավորություններ ունեն ընտրությունների հավասարակշռված լուսաբանման առումով, այն է՝ վճարովի եւ անվճար եթերաժամերի տրամադրում, հավասարակշռված լուսաբանում, քաղաքական գովազդի սահմանափակում, ընտրական գործընթացների մասով վերահսկողություն կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից), ինչպես նաեւ «Ազատություն TV», «Սիվիլնեթ», «Ֆակտոր TV» հեռուստաալիքները, որոնք եւս ազդեցություն ունեն լսարանի քաղաքական կողմնորոշումների վրա:

Վերոնշյալ հեռուստաալիքներում հետազոտման են ենթարկվել երեկոյան փրայմ-թայմին **(18.00-00.00)** հեռարձակվող լրատվական ծրագրի հիմնական թողարկումը եւ հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդումները: Մշտադիտարկման չեն ենթարկվել նախընտրական քարոզչության, առեւտրային/սոցիալական գովազդի/հայտարարությունների ներծրագրային բլոկները, ինչպես նաեւ՝ վազող տողը:

Մշտադիտարկման առարկա են եղել բոլոր այն հեռուստանյութերը, որոնցում անդրադարձ է եղել համապետական ընտրական ցուցակներով ՀՀ խորհրդարանական ընտրություններին մասնակցող կուսակցություններին/դաշինքներին/նրանց ղեկավարներին/ներկայացուցիչներին:

Դիտարկվել են նշված հեռարձակողների հետեւյալ հաղորդումները.

Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք - «Լուրեր» լրատվական ծրագրի գլխավոր թողարկում, «Հարցազրույց Պետրոս Ղազարյանի հետ», «Հանրային քննարկում», «Մեծ բանավեճ», «Հայաստանն ընտրում է»:

Առաջինի լրատվական ալիք - «Հարցազրույց Աննա Դանիելյանի հետ», «Բաց հարթակ»:

«Արմենիա» - «Ժամը» լրատվական ծրագրի գլխավոր թողարկում, «Ընտրության ժամը»:

«Կենտրոն» - «Էպիկենտրոն» լրատվական ծրագրի հիմնական թողարկում, «Կարելոր թեմա», «Հիմնահարց»:

«Շանթ» - «Հորիզոն» լրատվական ծրագրի գլխավոր թողարկում, «Հեռանկար», «Հեռանկար բանավեճ»:

«5-րդ ալիք» - «Հայլուր» լրատվական ծրագրի հիմնական թողարկում, «Հարցազրույց»:

«Ֆրի Նյուզ» - «Ազատ լուրեր» լրատվական ծրագրի հիմնական թողարկում, «Ազատ զրույց»:

«Ազատություն TV» - լրատվական հիմնական թողարկում, «Բանավեճ»:

«ՍիվիլՆեթ» - հարցազրույցներ, «Դիտանկյուն»:

«Ֆակտոր TV» - հարցազրույցներ (օրական երկու հարցազրույց) եւ բանավեճ - քննարկումները:

Հաշվարկվել են կուսակցությունների/դաշինքների վերաբերյալ անդրադարձների քանակը, անդրադարձների բնույթը՝ նշանային բնութագրիչներով, էթիկայի խախտումները (վիրավորանք, սպառնալիք, հայիոյախոսություն, անձնական կյանքին անհարկի միջամտություն): Ընդ որում, տարբերակվել են տվյալ լրատվամիջոցում տեղ գտած էթիկայի խախտման աղբյուրները (քաղաքական ուժերի ներկայացուցիչներ, ընտրությունների մասին արտահայտվող այլ անձինք, լրագրողներ/հաղորդավարներ): Արձանագրվել են այն դեպքերը, երբ բանավեճային հաղորդումների, հարցազրույցների ընթացքում լրագրողները/հաղորդավարները հյուրերին պարբերաբար հորդորել են զերծ մնալ վիրավորանքներից ու անհարգալից վերաբերմունքից:

2026թ. մայիսի 8-ից հունիսի 5-ն ընկած ժամանակահատվածում դիտարկվել է 1,636 նյութ: Կուսակցություններին/դաշինքներին անդրադարձների ընդհանուր թիվը 3,025 է, որից 1,155-ը այս կամ այն կուսակցությանը/դաշինքին ամբողջությամբ նվիրված նյութերի ընդհանուր թիվն է, 1,821-ը՝ կուսակցություններին/դաշինքներին մասնակի նվիրված նյութերի ընդհանուր թիվը, իսկ 49-ը՝ բոլոր կուսակցությունների/դաշինքների հիշատակումների ընդհանուր թիվը: Ընդհանուր առմամբ՝ եղել է 183 դրական, 730 բացասական եւ 2,112 չեզոք անդրադարձ (Այստեղ եւ հետայսու՝ տե՛ս կից աղյուսակները):

Կուսակցությունների/դաշինքների մասին արտահայտություններում/տեսադրվագներում էթիկայի խախտումների ընդհանուր քանակը 156 է, որից 145-ի աղբյուրը ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի ներկայացուցիչներն են, իսկ 11-ինը՝ այլ անձինք:


Ըստ քարոզարշավին նվիրված նյութերի քանակի՝ ամենաակտիվ լրատվամիջոցներն են «5-րդ ալիքը» (295 նյութ) եւ Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիքը (272 նյութ): Ամենապասիվը Առաջինի լրատվական ալիքն է (26 նյութ) եւ «ՍիվիլՆեթը» (29 նյութ): Մնացած լրատվամիջոցները քարոզարշավին հետեւյալ քանակի նյութեր են տրամադրել. «Ազատություն TV» - 218, «Արմենիա» - 211, «Կենտրոն» - 209, «Ֆրի Նյուզ» - 175, «Շանթ» - 162, «Ֆակտոր TV» - 39:

Ինչ վերաբերում է կուսակցություններին/դաշինքներին անդրադարձների քանակին, առավելագույն ուշադրության է արժանացել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը (1,057 անդրադարձ, բոլոր անդրադարձների 35%-ը): Պետք է նշել, որ ԲԴ-ի վերաբերյալ անդրադարձների առատությունը պայմանավորվում է նաեւ նրանով, որ քարոզարշավի ընթացքում այդ կուսակցությանը պարբերաբար անդրադառնում էին գրեթե բոլոր քաղաքական ուժերը:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2026

Նվազագույն ուշադրության են արժանացել «Քոչարի ազգային վերածնունդ եւ ազգի զարթոնք» կուսակցությունը (28 անդրադարձ, բոլոր անդրադարձների մոտ 1%-ը) եւ «Այլանս» առաջադիմական ցենտրիստական կուսակցությունը (26 անդրադարձ, բոլոր անդրադարձների մոտ 1%-ը): «Այլանսի» անդրադարձների սակավությունը պայմանավորված է նաեւ նրանով, որ կուսակցությունն ինչ-որ պահից դուրս է եկել ընտրապայքարից, չի մասնակցել ընտրություններին, եւ նրա լուսաբանումը դիտարկվել է մինչեւ 2026 թ. մայիսի 27-ը:


Մնացած կուսակցությունները հետեւյալ քանակի անդրադարձներ են ստացել. «Ուժեղ Հայաստան» դաշինք - 451 անդրադարձ (բոլոր անդրադարձների 14.9%-ը), «Հայաստան» կուսակցությունների դաշինք - 385 (12.7%), «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն - 299 (9.9%-ը), «Միասնության թեւեր» կուսակցություն - 100 (3.3%), «Լուսավոր Հայաստան» կուսակցություն - 83 (2.7%), Հայ ազգային կոնգրես կուսակցություն - 74 (2.4%), «Հանրապետություն» կուսակցություն - 70 (2.3%), «Բոլորին դեմ եմ» ժողովրդավարական կուսակցություն - 62 (2.0%), Հայաստանի շնորհապետական կուսակցություն - 61 (2.0%), «Նոր ուժ» ռեֆորմիստական կուսակցություն - 54 (1.8%), «Հանուն Հանրապետության ժողովրդավարության պաշտպանների դաշինք» կուսակցություն - 52 (1.7%), «Ժողովրդավարական համախմբում» կուսակցություն - 51 (1.7%), «Ազգային ժողովրդավարական բեւեռ» համահայկական կուսակցություն - 49 (1.6%), Ռեֆորմիստների կուսակցություն - 49 (1.6%), «Դեմոկրատիա օրենք կարգապահություն» կուսակցություն - 40 (1.3%), Զրիստոնեա-ժողովրդավարական կուսակցություն - 34 (1.1%):



Ինչ վերաբերում է նշանային բնութագրիչներով անդրադարձներին (դրական, բացասական, չեզոք), արձանագրվել է հետևյալ պատկերը:

Ամենից շատ դրական անդրադարձ ստացել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը (59 անդրադարձ, բոլոր դրական անդրադարձների 32%-ը): Այդ կուսակցությունը նաեւ ամենաշատ բացասական անդրադարձներն է ստացել (400, բոլոր բացասական անդրադարձների 55%-ը): Դրական անդրադարձների թվով երկրորդ տեղում «Հայաստան» կուսակցությունների դաշինքն է (43, բոլոր դրական անդրադարձների 23%-ը), իսկ բացասական անդրադարձների թվով՝ «Ուժեղ Հայաստանը» (137, բոլոր բացասական անդրադարձների 19%-ը):

Մի շարք հեռուստաալիքներում դրական ու բացասական անդրադարձների միջեւ արձանագրվել են զգալի տարբերություններ: Պետք է առանձնացնել **«5-րդ ալիքը»**, որի եթերում ԶԴ-ն ստացել է 0 դրական եւ 183 բացասական անդրադարձ, իսկ Հայաստան դաշինքը՝ 24 դրական եւ զրո բացասական: **Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիքում** ՈԻՀ-ն ունեցել է 0 դրական եւ 59 բացասական անդրադարձ, իսկ, օրինակ, «Կենտրոնում» ԶԴ-ն է ունեցել զրո դրական եւ 49 բացասական անդրադարձ: Հետազոտվող ալիքներից **«Սիվիլնեթն»** ու **«Ֆակտոր TV»-ն** փորձում էին կուսակցություններին/դաշինքներին նվիրված նյութերում ներառել հնարավորինս քիչ նշանային բնութագրիչներով անդրադարձներ: Բացառությունը ԶԴ-ն էր, որի վերաբերյալ «Սիվիլնեթում» ու «Ֆակտոր TV»-ում, համապատասխանաբար, 10 ու 12 անգամ արձանագրվել է բացասական անդրադարձ: Պետք է նշել, որ ԶԴ-ի վերաբերյալ անդրադարձների առատությունը պայմանավորվում է նրանով, որ այդ կուսակցությանը պարբերաբար անդրադառնում էին գրեթե բոլոր մրցակից քաղաքական ուժերը:



Դրական եւ բացասական որեւէ անդրադարձ ստացած կուսակցությունների/դաշինքների ընդհանուր պատկերը.

Կուսակցություն/դաշինք	Դրական բացասական անդրադարձ	Դրական անդրադարձ	Բացասական անդրադարձ
«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն	459 (50.3%)	59 (32.2%)	400 (54.8%)
«Ուժեղ Հայաստան» դաշինք	170 (18.6%)	33 (18.0%)	137 (18.8%)
«Հայաստան» կուսակցությունների դաշինք	137 (15.0%)	43 (23.5%)	94 (12.9%)
«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն	107 (11.7%)	23 (12.6%)	84 (11.5%)
«Միասնության թելեր» կուսակցություն	10 (1.1%)	2 (1.1%)	8 (1.1%)
«Նոր ուժ» ռեֆորմիստական կուսակցություն	8 (0.9%)	8 (4.4%)	0 (0.0%)
«Հանրապետություն» կուսակցություն	5 (0.5%)	4 (2.2%)	1 (0.1%)
Հայ ազգային կոնգրես կուսակցություն	5 (0.5%)	2 (1.1%)	3 (0.4%)
«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	3 (0.3%)	1 (0.5%)	2 (0.3%)
«Ժողովրդավարական համախմբում» կուսակցություն	2 (0.2%)	2 (1.1%)	0 (0.0%)
Հայաստանի շնորհապետական կուսակցություն	2 (0.2%)	2 (1.1%)	0 (0.0%)
«Բոլորին դեմ եմ» ժողովրդավարական կուսակցություն	2 (0.2%)	1 (0.5%)	1 (0.1%)
Ռեֆորմիստների կուսակցություն	2 (0.2%)	2 (1.1%)	0 (0.0%)

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2026

«Հանուն Հանրապետության ժողովրդավարության պաշտպանների դաշինք» կուսակցություն	1 (0.1%)	1 (0.5%)	0 (0.0%)
---	----------	----------	----------



Նշանային բնութագրիչներով ամենից շատ անդրադարձ դիտարկվել է «5-րդ ալիքի» եթերում - 57 դրական անդրադարձ, բոլոր դրական անդրադարձների 31%-ը, եւ 191 բացասական անդրադարձ, բոլոր բացասական անդրադարձների 26%-ը:

Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիքի եթերում բոլորից շատ են բացասական անդրադարձները՝ 173 (բոլոր բացասական անդրադարձների 23%-ը), իսկ դրական անդրադարձները ընդամենը 17-ն են (բոլոր դրական անդրադարձների 9%-ը):

Ամենաքիչ նշանային բնութագրիչներն են անդրադարձներ արձանագրվել են «ՍիվիլՆեթի» եթերում՝ 0 դրական եւ 17 բացասական անդրադարձ (բոլոր բացասական անդրադարձների 2%-ը):

Դրական եւ բացասական անդրադարձների ընդհանուր պատկերն՝ ըստ հեռարձակողների.

Հեռարձակողներ	Դրական անդրադարձ	Բացասական անդրադարձ
«5-րդ ալիք»	57 (31.1%)	191 (26.2%)
Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք	17 (9.3%)	173 (23.7%)
«Ֆրի Նյուզ»	22 (12.0%)	90 (12.3%)
«Ազատություն TV»	8 (4.4%)	83 (11.4%)
«Շանթ»	41 (22.4%)	28 (3.8%)
«Կենտրոն»	16 (8.7%)	52 (7.1%)
«Արմենիա»	18 (9.8%)	39 (5.3%)
Առաջինի լրատվական ալիք	3 (1.6%)	29 (4.0%)
«Ֆակտոր TV»	1 (0.5%)	28 (3.8%)
«ՍիվիլՆեթ»	0 (0%)	17 (2.3%)
Ընդամենը	183 (100%)	730 (100%)



Ինչ վերաբերում է Էթիկական խախտումներին, կարող ենք նկատել, որ քաղաքական ուժերի ներկայացուցիչները քարոզարշավի ողջ ընթացքում մրցակիցների հասցեին հնչեցնում էին կտրուկ, վիրավորական, գրեթե հայիոյախառն արտահայտություններ: Հետազոտվող տասը հեռուստաալիքների եթերում ի հայտ է եկել Էթիկայի կանոնների 156 խախտում արտահայտությունների/տեսադրվագների մակարդակով: Ամենից շատ խախտում արձանագրվել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը

վերաբերող արտահայտություններում/տեսադրվագներում: Խախտումների թիվը 66 է, որը կազմում է խախտումների ընդհանուր թվի 42 %-ը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցությանն առնչվող խախտումները 32-ն են (ընդհանուրի 20%-ը): Նրանց հաջորդում են «Հայաստան» դաշինքը (30 խախտում, ընդհանուրի 19%-ը) եւ «Ուժեղ Հայաստան» դաշինքը (24 խախտում, ընդհանուրի 15%-ը): Այս խախտումների թիվը կտրուկ նվազում է. «Նոր ուժ» ռեֆորմիստական կուսակցություն (3 խախտում, ընդհանուրի մոտ 2%-ը), «Լուսավոր Հայաստան» կուսակցություն (1 խախտում, ընդհանուրի 0.6%-ը): Մնացած կուսակցությունների նկատմամբ խախտումներ չեն արձանագրվել:

Ամենից շատ էթնկական խախտումներ արձանագրվել են «Ազատություն TV»-ի եթերում (44 խախտում, խախտումների ընդհանուր թվի 28%-ը): Ինչպես արդեն նշվել է, բոլոր խախտումները քաղաքական ուժերի կողմից արտահայտությունների վերարտադրման արդյունք են: Նրան հաջորդում է «5-րդ ալիքը» (42 խախտում, խախտումների ընդհանուր թվի 26%-ը): Ամենաքիչ խախտումներ դիտարկվել են «Շանթի» եթերում (1 խախտում, ընդհանուրի 0.6%-ը):

Մնացած լրատվամիջոցների եթերում արձանագրված խախտումների պատկերը հետևյալն է. Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք - 29 խախտում (18.6 %), «Ֆրի Նյուզ» - 19 խախտում (12.2%), «Ֆակտոր TV» - 8 խախտում (5.1%), Առաջինի լրատվական ալիք - 4 խախտում (2.6%), «ՍիվիլՆեթ» - 3 խախտում (1.9%), «Արմենիա» - 3 խախտում (1.9%), «Կենտրոն» - 3 խախտում (1.9%):

Որպես հաճախակի հանդիպող խախտման օրինակ կարելի է բերել եթերում հնչած «պատերազմի եռագլուխ կուսակցություն», «եռագլուխ դեմ» արտահայտությունները ՌԻՀ-ի, Հայաստան դաշինքի ու Բարգավաճ Հայաստանի նկատմամբ (հատկապես շատ է հնչել, «Ֆրի Նյուզի», «Ազատություն TV»-ի եւ «5-րդ ալիքի» եթերում) Օգտագործվել են «փռել ասֆալտին, ծեփել, մարդակեր» արտահայտությունները:

Պետք է նշել, որ հետազոտված լրատվամիջոցները ընտրարշավի ընթացքում հնչած եւ էթնկայի խախտումներ պարունակող հայտարարությունների նկատմամբ ընտրել էին տարբեր մոտեցումներ: Մի մասը համարում էր, որ դրանց տարածումը նպատակահարմար է սահմանափակել՝ հասարակության մեջ անհանդուրժողականությունը եւ ագրեսիվությունը նվազեցնելու նպատակով: Իսկ մյուս մասը համարել է, որ ընտրողներին հարկավոր է մատուցել քաղաքական գործիչների մասին ամբողջական պատկերը՝ քվեարկելուց առաջ համարժեքորեն կողմնորոշվելու համար: Երկու մոտեցումներն էլ կարելի է ընդունելի համարել, եթե մեջբերումների ընտրության առումով այս կամ այն քաղաքական ուժի նկատմամբ հատուկ բարյացակամ վերաբերմունք կամ վարկաբեկման միտում չի դրսևորվում:

Հանրային հեռուստաընկերության Առաջին ալիքն առանձնանում էր «Հայաստանն ընտրում է» խորագիրը կրող հանրային բանավեճերով: Յուրաքանչյուր հաղորդման սկզբում, կանոնները ներկայացնելիս, հաղորդավարը նշում էր վիրավորանքներից խուսափելու, հարգալից վերաբերմունքի անհրաժեշտության մասին, սակայն քաղաքական գործիչները շատ դեպքերում խախտում էին կանոնները: Բանավեճի ընթացքում էթնկայի կամ եթերային վարքագծի խախտումները վերաբերում էին մասնակից քաղաքական ուժերի փոխադարձ մեղադրանքներին: Մասնակիցների միջեւ գրանցվել են լարված առճակատումներ, փոխադարձ վիրավորանքներ, սպառնալիքներ, արժանապատվությունը նվաստացնող արտահայտություններ: Որոշ մասնակիցներ խախտում էին ժամանակային ռեգլամենտը՝ տեղից գոռալով, այլ մասնակցի խոսքին զուգահեռ խոսելով ու ռեպլիկներ նետելով, հաղորդավարի/մոդերատորի կոչերն

անտեսելով:

Առաջինի լրատվական ալիքում Եթիկայի խախտումները մինիմալ էին (4 խախտում):

«Արմենիան» հիմնականում զուսպ լուսաբանում էր ներկայացնում, բանավիճային հաղորդումների ժամանակ հյուրերի նկատմամբ հարգալից վերաբերմունք էր նկատվում: Արձանագրվել է Եթիկայի խախտում պարունակող ընդամենը 3 դրվագ՝ որոնցում քաղաքական գործիչները մրցակիցների նկատմամբ հայիոյական արտահայտություններ ու վիրավորանքներ են հնչեցնում:

«Շանթը» ձգտում էր հավասարակշռված եւ զուսպ ներկայացնել բոլորին. արձանագրվել է Եթիկայի մեկ խախտում: Հարցազրույցների ժամանակ հաղորդավարները հյուրերին հորդորում էին վիրավորանք չհնչեցնել:

«Կենտրոն» այս քարոզարշավի ընթացքում աշխատել է խուսափել Եթիկայի խախտման դրվագներից (հետազոտված հաղորդումներում ընդամենը 3-ն էին): Անգամ ԶԴ-ԲՀԿ (Փաշինյան - Ծառուկյան) հեռակա բանավեճի առավել սուր պահերը որոշակի զսպվածությամբ էին ներկայացնել:

«5-րդ ալիքում» արձանագրվել է ակնհայտորեն ընդգծված բացասական վերաբերմունք Նիկոլ Փաշինյանի նկատմամբ՝ որպես «Ադրբեջանի կամակատարի», որը քանդում է պետությունը, սպառնում է պատերազմով, մանիպուլյացիա անում: Ընդհանրապես, այս ալիքում ամենից շատ վիրավորանք, ատելության խոսք, զրպարտանք, սպառնալիք է հնչել տարբեր կողմերից էլ: Ընդդիմադիր գործիչների կողմից Փաշինյանի հասցեին կիրառվել է կոշտ բառապաշար. «սուտասան», «խաբեբա», «համբալ», «շուկեր», «դեղերը չի խմել», «հարբեցող ծաղրածու», «թափառական»... Այս ալիքի եթերում, բացի քաղաքական գործիչներից, Եթիկական խախտումներ պարունակող արտահայտություններ արվել են նաեւ այլ անձանց կողմից: Հեգնական վերաբերմունք է զգացվել նաեւ լրագրողների ինտոնացիայում կամ շեշտադրումներում՝ սարկաստիկ տոն եւ քմծիծաղ:

«Ֆրի Նյուզում» հնչել են առավել տարածված վիրավորանքները՝ «համբալ» եւ այլն: «Ֆրի Նյուզը» պարբերաբար ՈւՀ-ի վերաբերյալ ձայնագրություններ էր ներկայացնում, որոնք, ըստ Հայաստանի հակակոռուպցիոն կոմիտեի, վկայում էին կաշառք բաժանելու մասին: Շատ է հնչել «եռագլուխ դեւերի» մասին խոսույթը:

«Ազատություն TV»-ի հիմնական լուսաբանումները հավասարակշռված են եղել: ԶԴ-ի մասին բացասական խոսքին, որպես կանոն, հետեւել է ԶԴ-ի փաստարկը, եւ այլն: Հնչել են քաղաքական գործիչների կողմից վիրավորական կամ գռեհիկ արտահայտություններ. «ուժեղի քիթ-մոռվը ջարդվելու է», «ո՛վ եք, որ գաք Էստեղ դվիժեհի անեք, Ռոբին կզացնելու եմ, նստելու է, կալուզացուն էլ եմ նստացնելու» եւ այլն:

Բանավեճերի մասնակիցներին զգուշացնում էին, որ վիրավորական արտահայտություններից պետք է խուսափել:

«Ֆակտոր TV»-ն ձգտել է հնարավորինս կոռեկտ լուսաբանել քարոզարշավը, Եթիկայի խախտումները պարունակող դրվագները (8) քաղաքական գործիչների նախաձեռնությամբ կամ վերարտադրությամբ էին տարածվում, սակայն ընդգծված, ականջ ծակող, հայիոյախառն վիրավորանքներ չեն արձանագրվել:

«ՍիվիլՆեթի» եթերում հնչել են, ավելի շուտ, սուր քննադատություններ, քան

վիրավորանքներ եւ հայիոյանք (3 խախտում է արձանագրվել):

Էթիկայի խախտման հիշատակված դեպքերում հեռարձակողները, որպէս կանոն, պատասխանատվություն չեն կարող կրել Էթիկայի խախտումների համար, քանի որ խախտումները ոչ թէ լրագրողների, այլ ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի ներկայացուցիչների կամ այլ անձանց կողմից արված արտահայտությունների վերարտադրման արդյունք են:

Ինչ վերաբերում է քաղաքական ուժերի ներկայացուցիչներին «Յուր ստուդիայում» ձեւաչափի հաղորդումներում մասնակից դարձնելու համաչափությանը, արձանագրվել է հետեւյալ պատկերը:

Թեւեւ հեռուստաալիքների մեծ մասը ձգտել է հյուրընկալել հնարավորինս բազմազան քաղաքական ուժերի, սակայն հյուրերին տրամադրված եթերաժամանակի ծավալի ցուցանիշները եականորեն տարբերվել են: Կարելի է ենթադրել, որ շատ դեպքերում դա պայմանավորված է քաղաքական գործիչների՝ հրավերն ընդունելու պատրաստակամությամբ, ինչպէս նաեւ այս կամ այն կուսակցությունների/դաշինքների նկատմամբ հանդիսատեսի հետաքրքրությամբ:

Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիքը փորձել է հրավիրել բոլորին: Ընտրություններում մասնակցող կուսակցությունների/դաշինքների ներկայացուցիչները 4-8 անգամ մասնակցել են դիտարկված հաղորդումներին: Ամենից հաճախ ներկայացված են եղել ԶԴ-ն եւ ՈՒՀ-ն՝ 8-ական անգամ:

Առաջինի լրատվական ալիքը նույնպէս փորձել է բոլորին հրավիրել: Չեն ներկայացվել «Լուսավոր Հայաստան» ու «Այլանսը», դիտարկված հաղորդումներին 2 անգամ մասնակցել է «Հայաստան» դաշինքը, մնացածները մասնակցել են մեկական անգամ:

«Արմենիա» ՀԸ հրավիրվել են միայն այն ուժերի ներկայացուցիչները, որոնք դիտարկվել են որպէս հիմնական մրցակիցներ. ԶԴ՝ 9 անգամ, ՈՒՀ՝ 7 անգամ, «Հայաստան» դաշինք՝ 5 անգամ:

«Ֆրի Նյուզ»-ում միայն «Հանուն Հանրապետության» կուսակցությունն է այս ձեւաչափով ներկայացված եղել: Ընդհանուր առմամբ նախապատվությունը տրվում էր փորձագետներին եւ վերլուծաբաններին:

«Կենտրոնով» դիտարկված հաղորդումներում կուսակցությունների եւ դաշինքների մեծ մասը ներկայացվել է մեկական կամ 2-ական անգամ: Զարոգարշավին մասնակցած ուժերից 5-ն այս ձեւաչափով ոչ մի անգամ չի ներկայացվել (ներառյալ՝ «Այլանսը»):

«Շանթի» եթերում ՈՒՀ-ն ներկայացվել է 8 անգամ, ԶԴ-ն՝ 4, ուժերից 3-ը՝ ոչ մի անգամ, մնացածները՝ 1-ական կամ 2-ական անգամ:

«5-րդ ալիքում» 6 անգամ ներկայացվել է «Հայաստան» դաշինքը, կուսակցություններից/դաշինքներից 7-ը (ներառյալ ԶԴ-ն) ոչ մի անգամ չեն մասնակցել այս ձեւաչափով հաղորդումներին, մնացածները ներկայացվել են 1-ական կամ 2-ական անգամ: Եթե համեմատենք այլ ալիքների հետ, քաղաքական բեւեռացվածությունը «5-րդ ալիքում» շատ ավելի էր դրսեւորված. հեռուստաալիքը առանձնապէս չէր ձգտում հարթակ տրամադրել «Հայաստան» դաշինքի մրցակիցներին, վերջիններս էլ, կարծես, չէին ցանկանում հյուրընկալվել:

«ՍիվիլՆեթը» փորձել է հրավիրել հանդիսատեսի համար առավել մեծ

հետաքրքրություն ներկայացնող բոլոր ուժերին: Կուսակցություններից 7-ը կա՛մ չեն հրավիրվել, կա՛մ մերժել են մասնակցության հրավերը: Մյուսները հյուրընկալվել են 1-3 անգամ:

«Ազատություն TV»-ն բանավեճի էր հրավիրում, ավելի շուտ, ոչ թե քաղաքական գործիչների, այլ՝ հասարակության ներկայացուցիչների, որոնք տարբեր քաղաքական հայացքներ էին արտահայտում:

«Ֆակտոր TV»-ն «Հյուր ստուդիայում» ձեռաչափով փորձել է հարթակ տրամադրել ընտրություններին մասնակցող բոլոր քաղաքական ուժերի ներկայացուցիչներին: Ամենից հաճախ հրավիրվել է ԶԴ-ն (12 անգամ), մինչդեռ մնացած կուսակցություններն ու դաշինքներն այդ նույն ձեռաչափով ներկայացվել են 0-5 անգամ:

Ընդհանրապես, հաղորդումներում կոնկրետ կուսակցությունների/դաշինքների ներգրավվածությունը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնցից են կուսակցությունների/դաշինքների ակտիվությունը, լրատվամիջոցների քաղաքական կողմնորոշումները (առավել ցցուն օրինակ է «5-րդ ալիքը»), հասարակության հետաքրքրվածությունը այս կամ այն ուժի նկատմամբ (այս մոտեցումը կարելի է ընդունելի համարել հանրային մոլտիպլեքսում չներառված լրատվամիջոցների դեպքում), ինչպես նաեւ քաղաքական ուժերի ներկայացուցիչների՝ հաղորդումներին մասնակցելու պատրաստակամության բացակայությունը (այս գործոնը դրսևորվել է դիտարկած համարյա բոլոր հեռարձակողների դեպքում, բացառությամբ Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիքի):

**2026Թ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ
Ի ՀԱՅՏ ԵԿԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ,
ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

- **Պաշտոնական քարոզարշավի կարճ ժամանակահատված** (մայիսի 8-ից հունիսի 5-ը), որի արդյունքում, ռեսուրսներով առավել ապահովված կուսակցությունները կարողացել են շատ ավելի վաղ, քան չեն գործում համապատասխան կարգավորումները, նախընտրական ակտիվություն զարգացնել ու գերիշխող ազդեցություն ունենալ ընտրողի վրա:

Հնարավոր լուծում կարող է լինել պաշտոնական նախընտրական քարոզչության ժամանակահատվածից դուրս քաղաքական քարոզչություն իրականացնելու արգելքը՝ գոնե հանրային մոլտիպլեքսում ներառված եւ, միգուցե, հեղինակագրված հեռարձակողների համար, կամ էլ պաշտոնական քարոզարշավի ժամանակահատվածի երկարաձգումը:

- **«Լռության օրվա» կանոնների խախտումը**՝ որպես տեխնոլոգիական զարգացման արդյունքում առաջացած հաղորդակցային միջավայրի փոփոխման հետեւանք: Հաճախ, խախտման այդպիսի դեպքերին ամենեւին չի հաջորդում որեւէ իրավական պատասխանատվություն:

Հնարավոր լուծում կարող է լինել «լռության օր» ինստիտուտի վերացումը կամ խախտումների դեպքում պատասխանատվության ենթարկելու ընթացակարգի վերանայումը՝ ժամանակի իրողություններին համապատասխան:

- **Խիստ բեւեռացված հռետորաբանություն**: Հնարավոր լուծումներն այս դեպքում առնչվում են ոչ թե լրատվամիջոցների գործունեության, այլ՝ քաղաքական ուժերի փոխհարաբերությունների, քաղաքական մթնոլորտում իրականացվելիք փոփոխությունների հետ:

- **Լուսաբանման հավասարակշռության խոչընդոտները**: Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում հետազոտվող հեռուստաալիքները հարաբերականորեն հավասարակշիռ ուշադրության են արժանացրել խորհրդարանական ընտրություններին մասնակցող կուսակցություններին/ դաշինքներին: Հեռարձակողների մեծ մասը ձգտել է հավասարակշռությունն ապահովել սեփական նախաձեռնությամբ պատրաստվող ռեպորտաժների եւ հարցազրույցների հաշվին: Պաշտոնական քարոզարշավից դուրս ժամանակահատվածում հստակ օրենսդրական կարգավորման եւ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի կողմից մշտադիտարկման բացակայությունը էականորեն սահմանափակում է համեմատաբար նոր կամ քիչ ճանաչում ունեցող քաղաքական կուսակցությունների հնարավորությունները՝ քաղաքացիներին իրազեկելու իրենց գործունեության եւ նախընտրական ծրագրերի մասին: Այնինչ, շատ ընտրողներ իրենց որոշումը կատարում են պաշտոնական քարոզարշավից շատ ավելի առաջ, որը 2026 թվականին սահմանափակվեց ընդամենը 1 ամսով (29 օրով): Արտահերթ

ընտրությունների պարագայում քարոզարշավը էլ ավելի կարճ է եւ կարող է սահմանափակվել երկու շաբաթով: Սա ստիպում է հերթական անգամ ընդգծել կարգավորման եւ մշտադիտարկման անհրաժեշտությունը, ինչպես նաեւ՝ հայաստանյան հեռուստատեսությունը քաղաքական բազմակարծության ապահովման կարեւորությունը շատ ավելի երկարատեւ ժամանակահատվածով, քան պաշտոնական քարոզարշավի կարճատեւ ընթացքը:

- Քաղաքական ուժերի ներկայացվածությունը բանավիճային եւ «հյուր տաղավարում»/ հարցազրույց ձեւաչափի հաղորդումներում: Ընդհանուր առմամբ, հետազոտվող հեռուստաալիքները ձգտում էին արտացոլել նախընտրական մրցավազքի մասնակիցների բազմազանությունը՝ նրանց հրավիրելով «հյուր տաղավարում»/ հարցազրույց ձեւաչափի հաղորդումներին: Այս հաղորդումներում որոշակի չափով ներկայացված են եղել նաեւ քարոզարշավի անմիջական մասնակից չհանդիսացող անձինք՝ փորձագետներ, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ եւ այլք: Ինչպես նշվել է վերելում, հիմնականում փորձ է արվել ներկայացնել գրեթե բոլոր հիմնական քաղաքական ուժերը, սակայն շատ դեպքերում նրանք, ժամանակային առումով, անհավասարաչափ են ներկայացվել:

Հյուրերի ներկայացվածության անհամաչափության խնդիրը որոշ դեպքերում կարող է օբյեկտիվորեն հիմնավորված լինել, եւ այդ հիմնավորումները պետք է ներկայացված լինեն ՀՀ-ին (օրինակ, այն դեպքերում, երբ հյուրերը հրավիրված են եղել, բայց չեն եկել), որն էլ, ենթադրաբար, հանրությանը կներկայացնի համապատասխան տեղեկությունները:

Բացի այդ, նկատվել է, որ սույն մշտադիտարկման շրջանակներից դուրս գտնվող ոչ քաղաքական հաղորդումներում նույնպես հյուրընկալվում էին քաղաքական ուժերի ներկայացուցիչներ, սակայն հավասարակշռությունը, հյուրերի ընտրության առումով, որպես կանոն, չէր պահպանվում (օրինակ, «Երեկոն Շանթում» հաղորդումը, որի ընթացքում նույնպես ժամանակ առ ժամանակ հրավիրվում էին քաղաքական ուժերի ներկայացուցիչներ, սակայն մասնակիցների ընտրության հավասարակշռությունը չէր պահպանվում): Անգամ եթե հաղորդումների թեման հիմնականում կամ ընդհանրապես քաղաքականությունը չէր, ընտրություններին մասնակցող գործիչների մասնակցությունն ու նրանց դրական լույսի ներքո ներկայացնելը չէր կարող չազդել ընտրազանգվածի վերաբերմունքի վրա՝ հետեւաբար, անհավասար պայմաններ ստեղծելով քաղաքական ուժերի համար:

Ինչպես նշեցինք, հաղորդակցությանն առնչվող նոր տեխնոլոգիական հնարավորությունները կասկածի տակ են դնում մեդիա ոլորտի սեզմենտներից մեկի կողմից ընտրությունների հավասարակշռված լուսաբանմանն ուղղված առկա իրավական կարգավորումների նպատակահարմարությունը: Մասնավորապես, վերգետնյա հեռարձակողների կողմից կուսակցություններին/դաշինքներին հատկացվող եթերաժամանակի մեխանիկական չափումը քարոզչություն վարելու այլընտրանքային հնարավորությունների առկայության պայմաններում, զգալիորեն կորցնում է իր արդիականությունը: Մյուս կողմից, այս կամ այն հեռուստաալիքի կողմից տրամադրվող ընդհանուր եթերաժամանակը, ընդհանուր առմամբ, հաշվի չի առնում այդ ժամանակի «տեսակարար կշիռը» կոնկրետ հաղորդումներում: Դրանցից է վերոնշյալ «Երեկոն Շանթում» հաղորդումը, որը քարոզարշավի ժամանակ ԵՄԱ-ի մշտադիտարկման օբյեկտ չի եղել: Մեկ այլ օրինակ է Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիքի «Հարցազրույց Պետրոս Դազարյանի հետ» հաղորդումը, որտեղ ընտրարշավի ընթացքում քաղաքական ուժերի առաջնորդների հետ զրույցների տեւողությունը կարող էր զգալիորեն տատանվել՝ մոտ 30 րոպեից մինչեւ մեկուկես ժամ: Եվ անգամ եթե տրամադրված եթերաժամանակի հավասարակշռությունն այլ հաղորդումների հաշվին ապահովվում էր, տարբեր

հաղորդումներում հատկացված թույլների նշանակալիությունը, լսարանի վրա ազդեցության առումով, չէր կարող հավասարազոր լինել:

Ակնհայտ է, որ ստեղծված հանգամանքներում բացառապես իրավական կարգավորումներով անհնար է ՉԼՄ-ների միջոցով քարոզչության, թեկուզ համեմատաբար, հավասար պայմաններ ստեղծել: Հետեւաբար, ավելի մեծ նշանակություն պետք է ստանան խմբագրական քաղաքականությունը, մասնագիտական ինքնակարգավորման մեխանիզմների կիրառումը այն հեռարձակողների շրջանում, որոնք հավակնում են ծառայել հասարակության շահերին, այլ ոչ թե կոնկրետ քաղաքական ուժերին:

- Քաղաքական ուժերի՝ բանավեճերին մասնակցելու պատրաստակամությունը: Պետք է նշել, որ հայաստանյան քաղաքական գործիչները ոչ միշտ են պատրաստակամություն հայտնում եթերում մասնակցել բանավեճերի ու բաց քննարկումների: Օրինակ, Հանրային հեռուստառադիոընկերության հրավերներին Նախընտրական մրցավազքի մասնակիցներից ոմանք չեն արձագանքել: Հայաստանյան Նախընտրական պրակտիկայի այս հիմնախնդիրը առավել հրատապ է դարձնում Երեւանի մամուլի ակումբի՝ Նախկինում բարձրաձայնած առաջարկությունը՝ Ընտրական օրենսգրքում ամրագրել Հանրային հեռուստատեսությամբ բանավեճերին մասնակցելու պարտավորությունը: Այս պարտավորությունը կարող է ժամանակավոր լծակ ծառայել, մինչեւ որ բանավեճերին մասնակցությունը դառնա քաղաքական մշակույթի անքակտելի մաս: Միեւնույն ժամանակ, դա ենթադրում է բանավեճերի ավելի հստակ կանոնակարգում, որը բանավիճողների համար կերաշխավորի հավասար պայմաններ եւ կօգնի ընտրողներին՝ լավագույնս կողմնորոշվել քվեարկելուց առաջ:

- Էթիկայի կանոնների խախտումներ: Այս քարոզարշավային մեկամսյակի ընթացքում էթիկայի կանոնների խախտումներ բավականին հաճախ են արձանագրվել: Ոչ էթիկական արտահայտությունների աղբյուրը մեծ մասամբ եղել են քաղաքական ուժերի ներկայացուցիչները, այլ ոչ թե հաղորդավարները կամ լրագրողները, ինչը ՉԼՄ-ներին որոշ չափով ազատում է պատասխանատվությունից: Սակայն պետք է նշել, որ որոշ դեպքերում ՉԼՄ-ները/լրագրողները, եթե Նույնիսկ իրենք չեն էթիկայի կանոնների խախտում պարունակող բովանդակության անմիջական տարածողը, չեն կարող դիտարկվել որպես միանգամայն պասիվ կողմ: ՉԼՄ-ները պետք է մշակեն եւ կիրառեն որոշակի ներքին կանոններ, որոնք, մի կողմից, կնվազեցնեն վիրավորանք, հայհոյանք, սպառնալիք, մասնավոր կյանքի անհարկի միջամտություն պարունակող բովանդակության հոսքը, բայց, մյուս կողմից, չեն խոչընդոտի քաղաքական գործիչների մասին համարժեք պատկերացում ստանալու հնարավորությանը:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

I. Հետազոտության հիմնական միավորը **հեռուստանյութն** էր:

Հեռուստանյութ ասելով հասկանում ենք.

Եթերի՝ թեմատիկորեն, կառուցվածքով եւ ձեւավորմամբ առանձնացված միավորը, այսինքն՝

ա. լրատվական ծրագրի առանձին սյուժեն,

բ. հաղորդավարական տեքստով ընթերցվող առանձին տեղեկատվությունը,

գ. հաղորդման՝ թեմատիկորեն, կառուցվածքով եւ ձեւավորմամբ (միջարկում, բլյում եւ այլն) առանձնացված մասը (բաժինը, սյուժեն), որն անդրադառնում է տարբեր թեմաների/խնդիրների,

դ. սյուժեների ներծրագրային ծանուցումները (անոնսները) դիտարկվել են իբրեւ այն նյութի մաս, որին վերաբերում են,

ե. հեռուստասյուժեին (ռեպորտաժին եւ այլն) նախորդող հաղորդավարական տեքստը դիտարկվել է որպես այդ սյուժեի (ռեպորտաժի եւ այլն) մաս:

II. Մշտադիտարկման ընթացքում **պարզվել** եւ **արձանագրվել են.**

1. Հեռուստանյութերում կուսակցություններին/դաշինքներին/սրանց ղեկավարներին/ներկայացուցիչներին անդրադարձների քանակն ու ձեւը

Մշտադիտարկողները պարզել եւ համապատասխան սյունակներում արձանագրել են հեռուստանյութերում կուսակցություններին/դաշինքներին/սրանց ղեկավարներին/ներկայացուցիչներին անդրադարձների առկայությունն ու ձեւը:

Ա. կուսակցություններին/դաշինքներին/սրանց ղեկավարներին/ներկայացուցիչներին **ամբողջությամբ** նվիրված նյութ.

Նյութը համարվում էր կուսակցությանը/դաշինքին ամբողջությամբ նվիրված, եթե անգամ նրանում կար անդրադարձ մեկ այլ կուսակցության/դաշինքի, կամ էլ դիտարկման առարկա չհանդիսացող մեկ այլ թեմայի/թեմաների, բայց այդ անդրադարձը **ածանցյալ** բնույթ ուներ: Ընդ որում, եթե նման նյութում կար անդրադարձ (ածանցյալ բնույթի) մեկ այլ կուսակցության/դաշինքի, ապա տվյալ կուսակցությունը/դաշինքը նույնպես նշվում էր համապատասխան սյունակում՝ կախված նրան անդրադարձի ձեւից (մասնակի կամ հիշատակում):

Բ. կուսակցությանը/դաշինքին/սրանց ղեկավարներին/ներկայացուցիչներին **մասնակի** նվիրված նյութ.

Նյութը համարվում էր կուսակցությանը/դաշինքին մասնակի նվիրված, եթե նրանում **հավասարապես** կար անդրադարձ մեկ այլ կուսակցության/դաշինքի կամ դիտարկման առարկա չհանդիսացող մեկ այլ թեմայի/թեմաների: Ընդամիս, եթե նման նյութում հավասարապես առկա էին անդրադարձներ երկու եւ ավելի կուսակցությունների/դաշինքների, ապա այդ կուսակցություններից/դաշինքներից յուրաքանչյուրը նշվում էր «մասնակի» սյունակում:

Գ. Նյութ, որում **հիշատակվում** էին կուսակցությունները/դաշինքները/նրանց ղեկավարները/ներկայացուցիչները.

Հիշատակում էին համարվում այն դեպքերը, երբ նյութում կուսակցությունը/դաշինքը/նրա ղեկավարները պարզապես անվանվում էին, բայց նրանց մասին լրացուցիչ տեղեկություն, բնութագիր չէր տրվում:

Կուսակցության/դաշինքի ղեկավարների (կուսակցության ընտրական ցուցակում առաջին երեք տեղերը զբաղեցնողներ կամ դաշինք կազմած կուսակցության առաջին դեմք) ցանկացած երեւալը հեռուստանյութում դիտարկվել է որպես անդրադարձ այդ կուսակցությանը/դաշինքին՝ անկախ նրանից, թե ինչ դերում են այդ անձինք հանդես եկել (նույնիսկ եթե նրանք նյութում ներկայացվել են որպես իրենց ոչ կուսակցական, պաշտոնական կամ մասնագիտական պարտականությունները կատարող): Հետեւաբար, նման անդրադարձը հետազոտվել է վերոթվարկյալ եւ ներքոթվարկյալ բոլոր կատեգորիաներով (անդրադարձի ձեւն ու բնույթը, եթերաժամանակը):

Այս կատեգորիաներում հաշվարկը կատարվում էր **միավորներով**:

Կուսակցություններին/դաշինքներին/նրանց ղեկավարներին/ ներկայացուցիչներին անդրադարձների բնույթը հեռուստանյութերում

Մշտադիտարկողները պարզել եւ համապատասխան սյունակում արձանագրել են հեռուստանյութում կուսակցությանը/դաշինքին/նրա ղեկավարներին/ ներկայացուցիչներին անդրադարձների բնույթը՝ **դրական (+), բացասական (-)** կամ **չեզոք (0)**:

Նշանային (դրական, բացասական) անդրադարձներ ասելով հասկացվում էին նյութերում առկա այն անդրադարձները, որոնք լսարանի վրա կուսակցության/դաշինքի կամ նրա ղեկավարների/ներկայացուցիչների մասին միանշանակ դրական կամ բացասական ընդհանուր տպավորություն էին թողնում: Եթե նման միանշանակություն չկար, անդրադարձն արձանագրվում էր որպես չեզոք: Մշտադիտարկողի բոլոր կասկածները նույնպես մեկնաբանվում էին հօգուտ անդրադարձը չեզոք հաշվառելուն:

Բացի այդ, եթե նյութում հաղորդվում էր այն մասին, որ որեւէ անձ/կազմակերպություն հրապարակայնորեն հայտարարել է ՀՀ խորհրդարանական ընտրություններում այս կամ այն կուսակցությանը/դաշինքին սատարելու/չսատարելու մասին, ապա վերջինիս անդրադարձն արձանագրվում էր որպես համապատասխանաբար դրական/բացասական:

Ամեն մի նյութում արձանագրվում էր յուրաքանչյուր կուսակցության/դաշինքի/նրա ղեկավարների/ներկայացուցիչների միայն մեկ բնորոշիչ նշան (+, - կամ 0):

Այս կատեգորիայում հաշվարկը կատարվում էր **միավորներով**:

3. Հեռուստանյութերում կուսակցությունների/դաշինքների/ նրանց ղեկավարների/ներկայացուցիչների մասին արտահայտությունների եւ տեսադրվագների գնահատականը՝ Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրով ամրագրված մասնագիտական էթիկայի սկզբունքներին համապատասխանության տեսանկյունից

Մշտադիտարկողները գնահատում եւ արձանագրում էին էթիկայի չափանիշների խախտումները կուսակցությունների/դաշինքների/նրանց ղեկավարների/ ներկայացուցիչների մասին արտահայտություններում եւ տեսադրվագներում (տեսադրվագ ասելով՝ այս հետազոտության մեջ հասկանում ենք խոսքով չուղեկցվող հեռուստատեսային կադրը): Ընդ որում, գնահատվում էին նաեւ իրենց՝ կուսակցությունների/դաշինքների/նրանց ղեկավարների/ներկայացուցիչների արտահայտությունները:

Որպես հիմք են ծառայել [Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրով](#) ամրագրված սկզբունքները եւ դրանց կիրառման նախադեպերը Լրատվամիջոցների էթիկայի դիտորդ մարմնի աշխատանքում: Մասնավորապես, հաշվի են առնվել կանոնագրի հետեւյալ սկզբունքները.

- Սկզբունք 1. Ճշգրտություն եւ անկողմնակալություն (Կանոնագրի 1.3, 1.5 եւ 1.6 կետերը)
- Սկզբունք 4. Հարգանք մարդկանց անձնական կյանքի եւ այլ իրավունքների նկատմամբ (Կանոնագրի 4.1, 4.3, 4.5, 4.6 եւ 4.7 կետերը)
- Սկզբունք 5. Հարգանք գնազան խմբերի ներկայացուցիչների եւ համամարդկային արժեքների նկատմամբ (Կանոնագրի 5.1-ից 5.4 կետերը)
- Սկզբունք 7. Ազնվություն ընտրությունները եւ հանրաքվեները լուսաբանելիս (Կանոնագրի 7.1, 7.2, 7.3 եւ 7.5 կետերը):

Կուսակցությունների/դաշինքների/ նրանց ղեկավարների/ներկայացուցիչների մասին արտահայտություններում/տեսադրվագներում էթիկական սկզբունքների խախտման առկայության դեպքում նշվում էր նաեւ, թե ով է կատարել այդ խախտումը.

1. Հաղորդումը վարողը/նյութի հեղինակները,
2. Ընտրություններին մասնակցող քաղաքական ուժի ներկայացուցիչները,
3. Այլ անձինք (նյութերի հերոսներ, հաղորդումների մասնակիցներ, հարցազրույց տվողներ, մեջբերվող անձինք եւ այլն):

Ընդամին, «այլ անձինք» կատեգորիայի մեջ մտնում էին նաեւ լրատվամիջոցների այլ ներկայացուցիչները եւ այն լրագրողները, որոնք, չհանդիսանալով վարող/հեղինակ, նյութում/հաղորդման մեջ հանդես էին գալիս որպես հերոս/մասնակից:

III. Հետազոտված հաղորդումների մասնակիցների արձանագրումը

Հետազոտվող հեռուստաալիքի երեկոյան փրայմ-թայմին **(18.00-00.00)** առանձին ցուցակով մշտադիտարկողները արձանագրել են **«հյուր ստուդիայում»/թոք-շոու/հարցազրույց** ձեւաչափի տարբեր ուղղվածության հաղորդումների (այդ թվում, տվյալ ձեւաչափի առկայության պարագայում, լրատվական ծրագրերի) մասնակիցներին: Ցուցակում նշվել են հրավիրված մասնակիցների անունը (-ները)/պաշտոնը (-ները):

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅԱՏՎԱԾ
2026Թ. ՄԱՅԻՍԻ 8 - ՀՈՒՆԻՍԻ 5

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2026

Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք (Հ1), Առաջինի լրատվական ալիք, «Արմենիա» ՀԸ, «Կենտրոն» ՀԸ, «Շանթ» ՀԸ, «5-րդ ալիք» ՀԸ, «Ֆրի Նյուզ» ՀԸ, «Ազատություն TV», «ՍիվիլՆեթի», «Ֆակտոր TV»

8 մայիսի - 5 հունիսի, 2026թ.

Նյութերի քանակը	1636
-----------------	------

	Կուսակցություն/դաշինք	Կուսակցությանը/դաշինքին անդրադարձների քանակը (միավոր)	Կուսակցությանը/դաշինքին անդրադարձների ձևը (միավոր)			Կուսակցությանը/դաշինքին անդրադարձների բնույթը (միավոր)		
			Կուսակցությանը /դաշինքին ամբողջությամբ նվիրված նյութեր	Կուսակցությանը /դաշինքին մասնակի նվիրված նյութեր	Կուսակցության/դաշինքի հիշատակում	+	-	0
1.	ՌԵՖՈՐՄԻՍՏՆԵՐԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	49	27	21	1	2	0	47
2.	«ԲՈԼՈՐԻՆ ԴԵՄ ԵՄ» ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	62	31	30	1	1	1	60
3.	«ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ» ԴԱՇԻՆՔ	451	223	226	2	33	137	281
4.	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇՆՈՐՀԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	61	22	37	2	2	0	59
5.	«ՆՈՐ ՈՒԺ» ՌԵՖՈՐՄԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	54	17	35	2	8	0	46
6.	«ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԹԵՎԵՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	100	46	53	1	2	8	90
7.	«ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	299	130	161	8	23	84	192
8.	«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԲԵՎԵՌ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	49	24	24	1	0	0	49
9.	«ՔՈՉԱՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ ԵՎ ԱԶԳԻ ԶԱՐԹՈՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	28	11	16	1	0	0	28
10.	ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	74	36	37	1	2	3	69
11.	«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	70	32	37	1	4	1	65
12.	ՔՐԻՍՏՈՆԵԱ-ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	34	17	16	1	0	0	34
